

**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՓԱՍՏԱԹՂԹՂԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ
ԿԱՐԳ**

ք. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	3
2.	ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	3
3.	ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳ.....	4
4.	ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ.....	5
5.	ԳՈՐԾԱՐՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ.....	7
6.	ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ.....	7
7.	ՍԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ , ԴՐԱՆՑ ՎԱՐՍԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ.....	8
8.	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՐԳՈՒՄ.....	9

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ բանկ) կողմից ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթերի շրջանառության և տեղեկատվության փոխանակման պահանջները:

2. ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1. **«Հաճախորդ».** Անձ, որն օգտվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի ծառայություններից, կամ որը դիմել է ներդրումային ծառայություններ մատուցող անձին այդ ծառայությունից օգտվելու նպատակով:
- 2.2. **«Պատվեր».** Արժեթղթերով գործարքների կնքման նպատակով ներկայացվող հաճախորդի հանձնարարականը, ինչպես նաև ներդրումային ծառայություն մատուցող անձի կարգադրությունը, հանձնարարությունը, հայտը կամ առաջարկը:
- 2.3. **«Օրենք».** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:
- 2.4. **«Կենտրոնական բանկ».** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:
- 2.5. **«Բանկի ներքին կանոններ».** «ՀՀ Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման ներքին կանոններ:
- 2.6. **«Մատուցվող ծառայություններ»** «ՀՀ Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ:
- 2.7. **«Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց».** ցանկացած միջոց, որը հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ և պահպանել անձնապես իրեն ուղղված տեղեկատվությունը, և որը հետագայում հնարավորություն կտա այն լիարժեք օգտագործել և պահպանված տեղեկատվությունը վերարտադրել:
- 2.8. **«Պատասխանատու աշխատակից».** «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն որակավորված մասնագետ:
- 2.9. **«Ներդրումային ծառայություններ».** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով սահմանված ծառայություններ:
- 2.10. **«Ոչ հիմնական ծառայություններ».** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով սահմանված ծառայություններ:
- 2.11. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը:

3. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՍԱՆ ԿԱՐԳ

3.1. Հաճախորդի կողմից ներկայացվող տեղեկատվություն

1. Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու համար Հաճախորդը պետք է ներկայացնի Բանկի կողմից սահմանված փաստաթղթերի փաթեթը, որի կազմն ու բովանդակությունը կախված է կոնկրետ մատուցվող ծառայության տեսակից և կանոնակրագվում է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման Բանկի ներքին կանոններով:
2. Ներդրումային ծառայություններից օգտվելու համար Հաճախորդը պետք է ներկայացնի «Գիտելիքների և փորձի մասին» տեղեկանք (Տես Հավելված #1), որը հնարավորություն կտա Բանկին գնահատել, թե արդյո՞ք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է հաճախորդի պահանջներին, թե ոչ: Բանկը հիմնվում է հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք :
3. Այն դեպքում, երբ հաճախորդը չի տրամադրում գիտելիքների և փորձի մասին տեղեկանքը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Բանկը զգուշացնում է հաճախորդին այն մասին, որ հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյո՞ք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է հաճախորդի պահանջներին:
4. «Գիտելիքների և փորձի մասին» տեղեկանք ներկայացնելուց հետո Բանկի պատասխանատու աշխատակիցը որոշում է, թե արդյո՞ք հաճախորդն ունի ներդրումային գործունեության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, որպեսզի հասկանա տվյալ ներդրումային ծառայությունից կամ արժեթղթից բխող ռիսկերը: Բանկի գնահատականը տրամադրվում է Հաճախորդին (Տես Հավելված #1):

3.2. Հաճախորդին տրամադրվող տեղեկություններ

1. Նախքան ներդրումային ծառայությունների պայմանագրի կնքումը և ներդրումային ծառայությունների մատուցումը Բանկը հաճախորդներին պետք է տրամադրի տեղեկատվություն՝
 - Բանկի և նրա կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ,
 - Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման և տեղեկատվության փոխանակման միջոցների վերաբերյալ,
 - Արժեթղթերի վերաբերյալ,
 - Ներդրումային ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի և միջնորդավճարների մասին,
 - Շահերի բախումները կանխարգելող միջոցառումների վերաբերյալ,
 - և այլ տեղեկություն, պահանջվող «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4-07-ով:

2. Բանկի կողմից հաճախորդին տրամադրվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ գովազդային նյութերի տեղեկատվությունը) պետք է լինի.
 - պարզ, անկողմնակալ և ոչ ապակողմնորոշիչ
 - հասկանալի ներդրումների բնագավառում միջին մակարդակի գիտելիքներ և փորձ ունեցող մարդկանց համար:
3. Տեղեկատվությունը չպետք է ներկայացվի այն ձևով, որ թաքցվեն կարևոր դրույթները կամ նախազգուշացումները, ինչպես նաև տպավորություն ստեղծվի, որ դրանք ոչ կարևոր են:
4. Տրամադրվող տեղեկատվությունը հաճախորդներին պետք է հնարավորություն տա հասկանալու իրեն առաջարկվող կոնկրետ ներդրումային ծառայության և արժեթղթերի էությունը և դրանց հետ կապված ռիսկերը:
5. Բանկի կողմից Հաճախորդին տրամադրվող փաստաթղթերի և տեղեկատվության ցանկը, նրանց բովանդակությունը և ներկայացման կարգը սահմանվում է ներդրումային ծառայությունների և ոչ հիմնական ծառայությունների Բանկի ներքին կանոններով:

4. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման համար հիմք է հանդիսանում տվյալ ծառայության մատուցման պայմանագիրը:

4.1. Ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագիր:

1. Տվյալ պայմանագրի նկատմամբ պահանջները սահմանվում են, ՀՀ օրենսդրությամբ և տվյալ ծառայությունները կանոնակարգող Բանկի ներքին կանոններով:
2. Հաճախորդի և Բանկի միջև ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրերը կնքվում են թղթային տեսքով, երկու օրինակից, մեկ օրինակը տրամադրվում է Հաճախորդին, մյուսը՝ մնում է Բանկում:

4.2. Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր:

1. Նախքան ներդրումային պայմանագիր կնքելը Բանկը դասակարգում է հաճախորդներին՝ որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ: Որպես պրոֆեսիոնալ հաճախորդ կարող են դասակարգվել բացառապես որակավորված ներդրողները՝ իրենց համաձայնությունը տալու դեպքում:
2. Նախքան պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելը Բանկն այդ հաճախորդին տեղեկացնում է այն մասին, որ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4-07-ով սահմանված որոշակի պահանջներ չեն գործելու իր և հաճախորդի փոխհարաբերություններում՝

ներկայացնելով այդ պահանջների էությունը: Այն հաճախորդները, որոնք Օրենքում նշված ներդրումային ծառայություններից որևէ մեկի մասով կամ բոլոր ծառայությունների մասով տվել են իրենց համաձայնությունը որպես պրոֆեսիոնալ որակվելու համար, համապատասխան գրավոր հայտարարություն են ներկայացնում Բանկին այն մասին, որ.

- ա) համաձայն են որակվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ,
- բ) տեղյակ են, որ որպես պրոֆեսիոնալ հաճախորդ որակվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իրենց նկատմամբ և այդ պատճառով իրենք կորցնում են որոշակի պաշտպանվածություն:

3. Բանկի կամ վերջինիս պրոֆեսիոնալ հաճախորդի նախաձեռնությամբ թույլատրվում է պրոֆեսիոնալ հաճախորդ համարվող անձին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և իրականացնել դրանից բխող բոլոր անհրաժեշտ գործողությունները: Եթե Բանկը տեղեկանում է, որ հաճախորդը դադարել է որակավորված ներդրող լինելուց, ապա նա պետք է անհապաղ ձեռնարկի միջոցներ այդ հաճախորդի պրոֆեսիոնալ կարգավիճակը դադարեցնելու ուղղությամբ:

4. Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը սահմանում է՝

- կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
- ներդրումային ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկման և վճարման կարգը,
- հաճախորդներին հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը,
- հաճախորդի հետ կապի իրականացման կարգը, ինչպես նաև այն միջոցները, որոնք տվյալ հաճախորդի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ,
- պայմանագրի պահանջների չպահպանման համար կողմերի պատասխանատվությունը,
- կողմերի միջև առաջացող վեճերի լուծման կարգը,
- պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխությունների և լրացումների կատարման, գործողության դադարեցման կարգը, այդ թվում՝ հաճախորդի կողմից պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավունքը՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով,
- պայմանագրի դադարեցման դեպքում հաճախորդի միջոցների վերադարձման կարգը,
- օրենքով նախատեսված պարտադիր այլ տեղեկություններ:

Ի լրումն նախորդ կետում նշված տեղեկությունների՝ պայմանագիրը կարող է պարունակել նաև օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին և Բանկի ներքին կանոններին ու կանոնակարգերին չհակասող այլ դրույթներ:

5. Հաճախորդի և Բանկի միջև ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերը կնքվում են թղթային տեսքով, երկու օրինակից, մեկ օրինակը տրամադրվում է Հաճախորդին, մյուսը՝ մնում է Բանկում:

5. ԳՈՐԾԱՐՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման շրջանակներում գործարքների իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի (պատվերներ, հանձնարարականներ, հայտեր և այլն) ձևը, բովանդակությունը և դրանց ներկայացման ընթացակարգը և ժամկետները, ինչպես նաև դրանց պայմանների փոփոխման կամ հետ կանչման կարգը և ժամկետները սահմանվում են Բանկի ներքին կանոններով և տվյալ ծառայության մատուցման պայմանագրով:
2. Կախված գործարքի բնույթից և գործարքի կատարման վայրից, ներդրումային և ոչ հիմնական ծառայությունները պետք է իրականացվեն հիմք ընդունելով Կենտրոնական բանկի, Հայաստանի ֆոնդային բորսայի, Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի շուկան կարգավորող այլ նորմատիվային ակտերը:
3. Օտարերկրյա արժեթղթերով գործարքները իրականացնելիս Բանկը առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, Օտարերկրյա Պահառուի, Օտարերկրյա Բրոքերի կողմից ընդունված ներքին կանոններով և նրանց հետ կնքված պայմանագրերով:
4. Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման շրջանակներում պատասխանատու անձը կարող է ընդունել պատվերներ, հայտեր, հանձնարարականներ և օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր հետևյալ եղանակներով`
 - Թղթային (ներառյալ փաստաթղթերի փոխանցումը փոստով),
 - Ֆաքսիմիլային,
 - Էլեկտրոնային,
 - Հեռախոսով:
5. Գործարքն իրականացնելու համար փաստաթղթերի ու տեղեկատվության փոխանցման հնարավոր եղանակները կախված են մատուցվող ծառայության տեսակից և կանոնակարգվում են Բանկի ներքին կանոններով:

6. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Բանկը Օրենքով, իր ներքին կանոններով և պայմանագրով սահմանված դեպքերում պետք է Հաճախորդին տրամադրի համապատասխան հաշվետվություններ և տեղեկանքներ: Տվյալ հաշվետվությունները փոխանցվում են Հաճախորդի հետ համաձայնեցված կապի միջոցով: Դրանք են`
 - առձեռն` ստացականի միջոցով,
 - փոստային կապի միջոցով,
 - Էլեկտրոնային եղանակով,
 - ֆաքսիմիլային կապի միջոցով` հավաստիանալով, որ հաշվետվությունը ստացվել է հաճախորդի կողմից,

– և պայմանագրով սահմանված այլ միջոցներով:

2. Հաշվետվությունների, տեղեկանքների փոխանցման ընթացակարգը և ժամկետները, կախված են մատուցված ծառայությունների տեսակից և կանոնակարգվում են տվյալ ծառայությունը կարգավորող Բանկի ներքին կանոններով :

7. ՍԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ , ԴՐԱՆՑ ՎԱՐՍԱՆ, ՀԱՇՎԱՌՍԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՍԱՆ ԿԱՐԳԸ

1. Բանկը վարում է գրանցումներ կատարված գործարքների վերաբերյալ՝ Կենտրոնական բանկի նորմատիվային ակտերով սահմանված պահանջներին համաձայն:
2. Տվյալ գրանցումները պետք է ներառեն համապատասխան տեղեկություններ արժեթղթերով կատարած բոլոր գործարքների վերաբերյալ, անկախ այն բանից, թե ում հաշվին կամ անունից է այն կատարվել: Գրանցումներում պետք է նաև ներկայացվեն տեղեկություններ հաճախորդների ինքնության մասին:
3. Բանկը վարում է գրանցումներ հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի վերաբերյալ, կամ ներդրումային որոշման վերաբերյալ: Տվյալ գրանցումները պետք է կատարվեն պատվերների ստացման կամ ներդրումային որոշման կայացման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը: Տվյալ գրանցումների կազմման կարգը, նրանցում պարունակվող նվազագույն տեղեկությունները սահմանվում են «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4-07-ով և Բանկի կողմից սահմանված ներքին կանոններով:
4. Բանկի կողմից իրականացված գրանցումների կազմը, կազմման կարգը և ժամկետները սահմանվում են Բանկի ներքին կանոններով և տվյալ ծառայության մատուցման պայմանագրով:
5. Բանկը ապահովում է փաստաթղթերի պահպանման համար անհրաժեշտ բոլոր պայմանները, այդ թվում՝ օգտագործելով էլեկտրոնային տվյալների բազայում և թղթային կրիչների միջոցով պահպանվող տեղեկությունների պատճենահանման և փաստաթղթերի անվտանգ պահպանման համակարգերը: Մասնավորապես՝
 - **էլեկտրոնային տվյալների պահպանումը կանոնակարգվում է համաձայն «ՎՏԲ Բանկ Հայաստան ՓԲԸ-ի էլեկտրոնային տեղեկատվության արխիվացման, ռեզերվային կրկնօրինակման և վերականգնման» ընթացակարգի:**
 - **թղթային կրիչներով տեղեկատվության պահպանումը կանոնակարգվում է «ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ-ի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատանքային գործունեությանը առաջացած փաստաթղթերի արխիվացման, պահպանման և պահպանության ժամկետը լրացած փաստաթղթերի ոչնչացման» կարգի:**

6. Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված գրանցումների պահպանման ժամկետները սահմանվում են համաձայն ՀՀ Արժեթղթերի շուկայի օրենքի և Կենտրոնական Բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների: Մասնավորապես՝

- ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում կատարված գրանցումները՝ ստացված և կատարված հանձնարարականների վերաբերյալ և Կենտրոնական բանկի նորմատիվային իրավական ակտերով սահմանված այլ տեղեկատվության պահպանման ժամկետը սահմանվում է **7 տարի:**
- արժեթղթերի հաշվառման առնչվող փաստաթղթերի (գործառնությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթեր և արժեթղթերի հաշվառման գրքեր), ինչպես նաև տվյալների բազայի պահպանման ժամկետը սահմանվում է **70 տարի:**

8. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՐԳՈՒՄ

1. Սույն Կարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Բանկի կողմից միակողմանիորեն:
2. Սույն Կարգում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին տեղեկացումը կատարվում է նշված փոփոխությունները Բանկի ինտերնետային կայքում տեղակայելու միջոցով, ընդ որում կայքում պարտադիր նշվում է նաև այդ փոփոխությունների տեղակայման ամսաթիվը:
3. Սույն Կարգում Բանկի կողմից կատարված բոլոր փոփոխություններն ու լրացումները, որոնք կատարվել են Բանկի նախաձեռնությամբ և կապված չեն գործող օրենսդրության փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում և Հաճախորդի համար դառնում են պարտադիր Բանկի ինտերնետային կայքում տեղակայելուց 10 (տաս) օր հետո:
4. Բանկի կողմից սույն Կարգում կատարված բոլոր փոփոխությունները, որոնք կապված են գործող օրենսդրության, առևտրի կազմակերպիչների կանոնների և կանոնակարգերի փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում վերջիններիս ուժի մեջ մտնելուց հետո:

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿ

VTB(ARMENIA)

БАНК ВТБ (АРМЕНИЯ)

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՃԱՆՈՐԳԻ ՓՈՐՁԻ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաճախորդի անվանումը (անուն, ազգանունը) _____

ՀԱՃԱՆՈՐԳԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Արժեթղթերը և նրանց առանձնահատկությունները

- Գերազանց Միջին
 Լավ Անբավարար

Արժեթղթերի հետ կապված ռիսկեր

- Գերազանց Միջին
 Լավ Անբավարար

ՀԱՃԱՆՈՐԳԻ ՓՈՐՁԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գնահատեք ձեր փորձը արժեթղթերի բնագավառում

- Հարուստ Բավարար Կարճատև Փորձը բացակայում է

Գնահատեք ձեր փորձը ըստ արժեթղթերի տեսակների

	Հարուստ	Բավարար	Կարճատև	Բացակայում է
Բաժնետոմսեր և այլ բաժնային արժեթղթեր	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Պետական, մունիցիպալ և կորպորատիվ պարտատոմսեր	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Ածանցյալ գործիքներ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Ինվեստիցիոն հիմնադրամի արժեթղթեր	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Արժույթային պայմանագրեր	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
«Ռեյտ» գործարքներ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Մուրհակներ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Արժեթղթերով փոխառություն և վարկավորում	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Այլ գործարքներ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

_____ (անուն, ազգանունը) « _____ » 200 թ.

ԲԱՆԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՔ

Ներկայացված տեղեկությունների լիարժեքության և նրանցով գնահատականներ տալու վերաբերյալ

Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ՝ ներդրումային ծառայություններից և/կամ արժեթղթերից բխող ռիսկերը հասկանալու համար

- Ներկայացված տեղեկատվությունը բավարար է Հաճախորդին գնահատելու համար
 Ներկայացված տեղեկատվությունը բավարար չէ Հաճախորդին գնահատելու համար

- Գիտելիքները և փորձը բավարար են
 Գիտելիքները և փորձը բավարար չեն

_____ (անուն, ազգանունը) « _____ » 200 թ.